ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2016 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների

Կրթության ոլորտի զարգացման հետագա ուղղությունները նախանշելու նպատակով, ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հանրակրթության ոլորտ

- Ընդլայնվել է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը՝ 2017 թվականին ծրագրում ներառվել է ՀՀ Տավուշի մարզը: 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ Տավուշի մարզի 75 հանրակրթական դպրոցների նախակրթարանների, 1-4-րդ դասարանների և ներառական կրթության համակարգում ընդգրկված շուրջ 6523 սովորողներ ստանում են անվճար սնունդ: Շարունակվել է ծրագրի իրականացումը մինչ այդ մեկնարկած՝ Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում: Ընդհանուր առմամբ «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի շրջանակներում դպրոցական սնունդ է ստանում շուրջ 30 հազար սովորող: Միաժամանակ շարունակվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը, որում Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարունիքի և Արմավիրի մարզերում ընդգրկված է շուրջ 60 հազար սովորող:

- **Համընդհանուր ներառական կրթություն** - Համընդհանուր ներառական կրթությանը անցում կատարելու շրջանակում ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն, 2017 թվականին

ընդլայնվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ ընդգրկելով նաև ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը: Լոռու մարզում ձևավորվել են 3՝ Ստեփանավանի, Վանաձորի և Սպիտակի տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնները, ինչպես նաև Վանաձորի կենտրոնի մասնաճյուղը՝ Ալավերդի քաղաքում: Իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության, երեխաների գնահատման գործիքակազմի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ, հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիք: Այժմ արդեն համընդհանուր ներառական կրթության համակարգը գործում է Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերում:

- Ուսումնական հաստատությունների բյուջեների և ծախսերի հանրային հասանելիության ապահովման նպատակով հանրապետության բոլոր դպրոցների համար ստեղծվել են անհատական կայքեր: «Դպրոցական կայքեր» անվանմամբ **http://schoolsite.am/** միջավայրում առանձին էջերով տեղադրված են ուսումնական հաստատությունների կայքերի հղումների ցանկերը:
- Եվրոպական Իթվինինգ և «Դպրոցների համագործակցության վիրտուալ համայնքի» ծրագրում ընդգրկված են շուրջ 233 դպրոցներ և 1100 ուսուցիչներ, այդ թվում 22 դպրոց և 150 ուսուցիչ ծրագրին միացել են 2017 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Վերապատրաստվել է Լոռու, Տավուշի, Շիրակի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի ավելի քան 350 ուսուցիչ՝ մասնակից բոլոր դպրոցներից: Նշված ժամանակահատվածում հայաստանցի ուսուցիչների մասնակցությամբ սկսվել է 53 միջազգային **ն**ախագիծ: Նախատեսվում է նաև Իթվինինգի հարթակի միջոցով իրականացնել Մենթոր դպրոցների ծրագիրը: Ներկայումս 25 դպրոց գրանցվել են մենթոր, իսկ 12 դպրոց՝ գործընկեր դառնալու համար: «Հայկական կրթական միջավայրի» «Հեռավար ուսուցում» համակարգում (http://learning.armedu.am/) ստեղծվել և անցկացվել են 12 հեռավար դասընթաց, որից 3-ը կազմակերպել է ՀՀ ԿԳՆ Կրթական

տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Հեռավար ուսուցման հմտություններ ունեցող ուսուցիչները մշակել և համակարգում վարել են տարբեր ուսումնական առարկաներին առնչվող 9 հեռավար դասընթաց:

- 13 դպրոցներում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում՝ ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է նշված առարկաների փորձնական ծրագրերը: Վերապատրաստվել է 13 դպրոցների 46 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 1600 սովորող:
- 1247 դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ դասարաններում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցում՝ ձեռնարկատիրական տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է առարկայի փորձնական ծրագիրը: Վերապատրաստվել է 1247 դպրոցների 1356 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 62900 սովորող: 227 դպրոցների մեկական 10-րդ դասարաններում սեպտեմբեր ամսից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Ձեռնարկատիրություն» առարկայի ուսուցմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է առարկայի փորձնական ծրագիրը: Վերապատրաստվել է 227 դպրոցների 227 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 6300 սովորող:
- Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար պետական բյուջեի միջոցների հաշվին տպագրվել և տրամադրվել են եզդիերեն «Այբբենարան», «Եզդի գրականություն-8», «Եզդի գրականություն-9», «Եզդի գրականություն-10», «Եզդիերեն-6-8»: Իրականացվել է եզդիերեն դասավանդող 30, 10 ասորի ուսուցչի վերապատրաստում:
- Արմաթ ինժեներական լաբորատորիաներ են բացվել 67 հանրակրթական ուսումնական հաստատությունում: Համանուն ծրագրի խմբակներում ընդգրկված է 208 հանրակրթական ուսումնական հաստատություն, շուրջ 4700 սովորող:

- Արարատյան բակալավրիատի ծրագիրը ստացել է միջազգային ճանաչում: Մեծ Բրիտանիայի (ՄԲ) ճանաչման ազգային գործակալության (UK NARIC) զեկույցը հաստատել է ԱԲ-ն որպես միջազգային լավագույն դպրոցական ծրագրերին (UK A-levels, US AP) համազոր: ԱԲ-ն ներառվել է Մեծ Բրիտանիայի բուհական ընդունելության միասնական համակարգում՝ UCAS-ում, որպես միջազգային որակավորումներին (European Baccalaureate, International Baccalaureate) համազոր հանրակրթական ծրագիր ՀՀ-ից և ճանաչվել միջազգայնորեն առաջատար մի շարք բուհերի կողմից: Մեկնարկել է ԱԲ ծրագրում դպրոցների ներգրավման գործընթացը. ՀՀ մարզերի և Արցախի 21 դպրոց ներառվել է ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում: Ընտրական փուլերը հաղթահարել է և մասնագիտական զարգացման ծրագրում ներառվել է ՀՀ մարզերի և Արցախի շուրջ 110 ուսուցիչ:
- 2017-2018 ուստարում «Ազգային երգ ու պար» առարկան իրականացվում է հանրակրթական 233 դպրոցներում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և Եվրոպական միության «Yes» ծրագրի փորձագետի կողմից մշակվել է «Ուսուցիչ» ծրագիրը, որն իր մեջ ներառում է ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման մեխանիզմները: Ծրագիրը քննարկվել է ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմերում և արժանացել է հավանության: Նշված ծրագրի հիման վրա ներկայումս մշակվում է ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգը:
- ԿԳՆ-ն համագործակցել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ–ի) հայաստանյան գրասենյակի, Համաշխարհային Բանկի, «Հույսի կամուրջ», ՀՀ կենտրոնական բանկի, «Հայաստանի պատանեկան նվաճումներ», ԻՏԶՄ, British Counci, «Ազգային երգ ու պար հիմնադրամ», «Արաբկիր բժշկական համալիր», «Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» կազմակերպությունների հետ :

- «Կրթության բարելավում» վարկային նոր ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի, Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում հիմնվել է 23 նախակրթարան, որից 18-ը՝ գյուղական, 5-ը՝ քաղաքային համայնքներում, ընդհանուր առմամբ՝ 1200 երեխայի ընդգրկմամբ:
- Սոցիալական աջակցություն ստացող 39 համայնքի 49 դպրոցի 1-12-րդ դասարանների բոլոր սովորողներն ապահովվել են անվճար դասագրքերով:
- Ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ և առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել շուրջ 700 ուսուցչի, 2-րդ աստիճանի տարակարգ՝ շուրջ 20 ուսուցչի:
- Հանրակրթական դպրոցների օպտիմալացման շրջանակներում թվով 13 դպրոց վերակազմակերպվել է:
- Անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից, որոնց նախորդ ուստարում մասնակցել է շուրջ 1490 սովորող, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» «Կենսաբանություն» առարկաներից՝ շահելով 13 մեդալ՝ 5 արծաթ և 8 բրոնզ:
- Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.12.2017թ. թիվ 1539-Ա/2 հրամանի՝ ներդրվել է «Նախնական զինվորական պատրաստության» առարկայի ավագ դպրոցի 12-րդ դասարանի ծրագիրը:
- Մշակվել հանրային քննարկմանն է ներկայացվել «Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգը»:
- 2017 թվականի Թայվանում կայացել է 29-րդ համաշխարհային ունիվերսիադիան, որին ՀՀ պատվիրակությունը ներկայացել է 7 մարզաձևով՝ ծանրամարտ, սպորտային մարմնամարզություն, ձյուդո, ջրացատկ, սուսերամարտ, թաեքվանդո և ուշու: Հայաստանը ներկայացնող 16 մարզիկ 7 մարզաձևում նվաճել են 6 մեդալ՝ 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզ:

- 2017 թվականի Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի Տոկսովո ավանում տեղի է ունեցել ԱՊՀ երկրների դպրոցականների մարզական միջազգային 5-րդ փառատոնը: Ընդհանուր թիմային հաշվարկով Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:
- «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումն ավելի մատչելի դարձնելու նպատակով տպագրվել են թվով 37 338 հազար հատ ռազմագիտական ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ և բաժանվել են ուսումնական հաստություններին:
- Կազմակերպկել է ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջև անցկացվող «Կորյուն» ռազմամարզական խաղերը, որին մասնակցում են ՀՀ բոլոր մարզերը, Երևան քաղաքը և Արցախի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողները:
- Կազմակերպկել է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադան, որին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ թիմերը, թվով 12 թիմ, յուրաքանչյուր թիմը՝ 7 մասնակից, որոնցից 3-ը աղջիկ 5-ը տղա, ընդամները՝ 82 մասնակից: Առաջին տեղը գրավել է ԼՂՀ թիմը:
- 2017 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ արդեն յոթերորդ անգամ նախաձեռնել և իրականացրել է համահայկական նկարչական 7-րդ մրցույթ-փառատոնը՝ նվիրված ազգային տոներին: Մրցույթ-փառատոնի առաջին փուլում ներկայացվել է Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի (ԱՄՆ, Արգենտինա, Եգիպտոս, Թուրքիա, Լիբանան, Ռուսաստան, Ուզբեկստան, Իրան, Հորդանան, Ուկրաինա, Վրաստան, Քուվեյթ, Ֆրանսիա) 15 երկրների 145 հաստատության շուրջ 1320 աշխատանք: Ցուցահանդեսի համար ընտրվել է շուրջ 170 աշխատանք:

- Կազմակերպվել են ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական մարզական խաղերը: Ծրագրում ընդգրկվել է 9 մարզաձևեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, ս/թենիս, աթլետիկա, ֆուտզալ, բադմինթոն և լողափնյա վոլեյբոլ: Հանրապետական մարզական խաղերի 4 փուլերին (համայնքային, մարզային, միջմարզային և հանրապետական եզրափակիչ) մասնակից են դարձել շուրջ 55.000 դպրոցականներ: Եզրափակիչ փուլին մասնակցել են թվով 1026 դպրոցականներ:
- Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում ավարտված Աշխարհի առաջնությանը Հայաստանի ընտրանին՝ մեծահասակների և երիտասարդների առաջնություններում, շահել՝ 5 մեդալներ. 3 ոսկե, 2 արծաթե, սահմանելով Աշխարհի նոր ռեկորդ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտ

- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագրի» նախագիծը,
- Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2017-2018 ուսումնական տարում անվճար համակարգում սովորող ուսանողների թիվն ավելացել է շուրջ 1000-ով:
- Վերամշակվել է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը:
- Համաձայն Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» համաձայնագրի՝ մշակվել և վերանայվել են գյուղատնտեսական և գյուղատնտեսությանն առնչվող 29 պետական կրթական չափորոշիչներ և

մոդուլային ծրագրեր: Իրականացվել է չափորոշիչներ մշակող մասնագետների վերապատրաստում:

- Վերապատրաստվել են ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների առնվազն 40 ղեկավարներ, ՄԿՈՒ հաստատությունների առնվազն 900 մանկավարժական աշխատողներ,չափորոշիչներ մշակող առնվանզ 25 անձինք:
- Գործածության են երաշխավորվել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի համար 2017 թվականին մշակված 15 ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր:
- ՀՀ-ում գործող թվով 95 ՆՄԿՈՒ ուսումնական հաստատություններից 75-ում արդեն իսկ ներդրվել են կարիերայի կենտրոններ, ընտրվել են վերոնշյալ 75 ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների համար պատասխանատուներ, իրականացվել են 75 ուսումնական հաստատությունների կարիերայի պատասխանատուների վերապատրաստումներ և իրազեկման սեմինարներ:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ավստրիական զարգացման գործակալության միջև «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության» շրջանակներում մշակվել է «Օրգանական գյուղատնտեության սկզբունքները» ուսումնական մոդուլը, ինչպես նաև Մոդուլի ուսումնական ծրագիրը ներկայացնող ուսուցչի ձեռնարկ:
- WorldSkills International-ի շրջանակում տրվել է WorldSkills Eurasia համագործակցության մեկնարկը: Նախագծի շրջանակներում չորս պետությունների՝ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի ներկայացուցիչների միջև 2017թ. օգոստոսին Աստանայում ստորագրվել է WorldSkills Eurasia-ի ստեղծման մասին հռչակագիրը:
- «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացվող Եվրամիության ֆինանսավորմամբ «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» 2016-2017 թթ.

դրամաշնորհային մրցույթի 2-րդ փուլի շրջանակներում, որի ընդհանույր արժեքը կազմում է 90 հազ. 306 դոլարին համարժեք դրամ, ՄԿՈՒ 5 հաստատություններին (Երևանի թիվ 2 տարածաշրջանային պետական քոլեջ, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ և Սիսիանի պետական քոլեջ) տրամադրվել են փոքր դրամաշնորհներ: Արդյունքում հիմնվել են նորարարական սոցիալական ձեռնարկություններ՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար շարունակական մասնագիտական կրթություն և պրակտիկա ապահովելու նպատակով:

- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ (GIZ) ՄԿՈՒ 4 ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդրվել է դուալ կրթական համակարգ («Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում, «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն»-Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում, «Զբոսաշրջության ծառայությունների կազմակերպում»-Երևանի պետական հումանիտար քոլեջում, «Զբոսաշրջություն», «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությունների գծով -Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջում:
- «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն շվեյցարական գործընկերներ HEKS/EPER (Շվեյցարիայի եկեղեցու օգնության) և Կիրառական գիտությունների Բեռնի համալսարանի գյուղատնտեսության, անտառային և պարենային գիտությունների դպրոց (HAFL) կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բնագավառում «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» խորագրով ծրագիրը: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին և կավարտվի 2020 թվականին:

- ՀՀ կրթության և գիտության նախարարության և Եվրոպական կրթական հիմնադրամի համագործակցության շրջանակներում մեկնարկել է Եվրոպական կրթական հիմնադրամի Skills Connexion տարածաշրջանային ծրագրի՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցմանն առնչվող ենթածրագիրը, որը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը:
- Մեկնարկել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) կողմից համակարգվող «Մեծ Քսանյակի (G20) կադրերի մասնագիտական պատրաստման ռազմավարության կիրառումը. ԱՄԿ-ի և Ռուսաստանի Դաշնության գործընկերություն» ԱՄԿ ծրագիրը (2016-2019թթ.): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՄԿՈ ոլորտի կառավարման համակարգի բարելավում, միջազգային ստանդարտների համապատասխանեցում G20 ծրագրին, մարդկային ռեսուրսների զարգացում, աշխատատեղերի կանխատեսում, կարիերայի կողմնորոշում և այլն:
- «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամը շարունակում է Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթօջախների համապարփակ և հարատև զարգացման ծրագիրը: Հիմնադրամի ֆինանսավորմամբ և աջակցությամբ Հայաստանի Հանրապետության թվով 9 ՄԿՈ ուսումնական հաստատություններում հիմնվել են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ: Վայոց ձորի և Արարատի տարածաշրջանային պետական քոլեջներում հիմնվել են գինեգործության մինի արտադրամասեր: Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջին տրամադրվել է միկրո ավտոբուս՝ ուսանողների տեղափոխությունն ապահովելու համար:
- «Երիտասարդների զբաղունակության և հմտությունների զարգացման» ծրագրի շրջանակում մեկնարկել է երիտասարդական 7 «ՍՔԱՅ» ակումբների հիմնումը՝ առնվազն 100 երիտասարդի ներգրավմամբ:

Բարձրագույն կրթություն

- Կազմակերպվել են բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով ամփոփիչ ատեստավորման քննություններ, որի արդյունքում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների 172 (որից 2-ը՝ մագիստրոսի կրթական ծրագրով) շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնել են 130-ը (75.6%), որից 2-ը՝ մագիստրոս: Դրական գնահատականներով հանձնած շրջանավարտների ոչ պետական նմուշի նախկին դիպլոմը փոխարինվել է համապատասխան մասնագիտության և որակավորման բակալավրի ու մագիստրոսի պետական նմուշի դիպլոմով:
- «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը լրամշակվել և 2018 թվականի փետրվարի 8-ին ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը:
- Կարևորելով ապրիլյան պատերազմի մասնակիցների ընտանիքների սոցիալական բեռի թեթևացման անհրաժեշտությունը՝ ՀՀ բուհերի ռեկտորներին առաջարկվել է քննարկել և ուսանողների զինվորական գրքույկում համապատասխան նշման առկայության պարագայում մինչև ուսումնառության ավարտը ապրիլյան պատերազմի մասնակից ուսանողների համար կատարել ուսման վարձի առավելագույն զեղչ՝ 50 տոկոս և ավելի, առանց հաշվի առնելու ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը:
- Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ովքեր չեն հաղթահարել բուհի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը, առաջարկվել է ուսման վարձի փոխհատուցում իրականացնելիս սահմանել այլ նվազագույն շեմ (ՄՈԳ):
- Միջազգային չափանիշների համապատասխան մեկնարկել է ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացը: Հայաստանում Ամերիկյան համալսարանը, Հայ-

ռուսական (Սլավոնական) համալսարանը անցել են միջազգային հավատարմագրում: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամն անցել է որակի միջազգային հավատարմագրում Ֆրանսիայի բարձրագույն կրթության և հետազոտության գնահատման (HCERES) և Իսպանիայի որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության /AERES/ կողմից: ՀՀ 16 պետական և 2 ոչ պետական բուհեր անցել են ինստիտուցիոնալ հավատարմագրում, ոչ պետական 4 բուհեր պայմանագրային ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կողմից:

- Նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից դրամաշնորհների տրամադրման հավելյալ փուլի շրջանակներում 6 բուհերի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր, որոնք ուղղված են բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը (Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտ, Շիրակի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Գլաձոր համալսարան, Հյուսիսային համալսարան):
- ԵՄ-ի Erasmus+ ծրագրի շրջանակներում ՀՀ բուհերի կողմից շարունակվում են դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքները: Erasmus+ ծրագրի Կարողությունների զարգացման գործողության ներքո իրականացվել է 16 ծրագիր, որոնցից 5-ը համակարգվել են հայկական բուհերի կողմից (Հայաստանի պետական կառավարման ակադեմիա, Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա և Հայաստանում Ֆրանսիական համալսարան):

- Եվրոպայի Միության և Եվրոպայի Խորհրդի Արևելյան համագործակցության երկրների համար 2015-2017թթ. Գործընկերության և համագործակցության շրջանակի ներքո, ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականացվել է <<Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար>> ծրագիրը:
- 2017 թվականի նոյեմբերից մեկնարկել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման գործընթացը: Ըստ կրթական ծրագրերի /բակալավր, մագիստրոս/՝ նախատեսված է շուրջ 12 մլն դրամ խրախուսական գումար: Հաղթող են ճանաչվել (1-3-րդ տեղեր) 41 ուսանող (ըստ կրթական աստիճանների և ոլորտների):
- Շարունակվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպության» կարգավիճակ ունեցող ՀՀ պետական բուհերի «Հիմնադրամի» վերակազմակերպման գործընթացը: Ներկայումս 16 պետական բուհերից 12-ը ունեն <<Հիմնադրամի>> կարգավիճակ:
- Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից շարունակվում է իրականացվել սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100%-ի չափով: 2017 թվականին փոխհատուցում ստացած ուսանողների թիվը կազմել է 2667, ուսուցման վարձավճարի փոխհատուցման գումարը կազմել է 655.406.105 ՀՀ դրամ: Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցում ստացած առաջին կուրսի ուսանողների թվաքանակը կազմել է 988: Բակալավրի կրթական աստիճանում (երկրորդից չորրորդ կուրս) փոխհատուցում ստացել են 1626 ուսանող, իսկ մագիստրոսի կրթական աստիճանում՝ 53 ուսանող:

- Սոցիալական աջակցություն ստացող համայնքներում, ինչպես նաև Տավուշի մարզի Բերդի համայնքում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած և Հայաստանի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերի համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա) բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով ուսանողներին հատկացվել են զեղչեր, մասնավորապես մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով գերազանց առաջադիմություն ունեցողներին՝ ուսման վճարի 60 և անկախ առաջադիմությունից՝ ուսման վճարի 30 տոկոսի չափով:
- 2016թ. սեպտեմբերից առ այսօր օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու նպատակով՝ միջպետական համաձայնագրերի շրջանակներում, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից գործուղվել է շուրջ 440 ՀՀ քաղաքացի: ՀՀ ուսումնական հաստատություններ ընդունվել է շուրջ 2500 օտարերկրյա քաղաքացի՝ 42 պետություններից: Ներկայումս Հայաստանում սովորում է շուրջ 3800 սփյուռքահայ, որից 530-ը՝ անվճար հիմունքներով: Նրանցից շուրջ 190-ը ստանում են մանկավարժական կրթություն:
- 2017 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից ընդունվել են ՀՀ միջնակարգ կրթության ավարտական վկայականները և ՀՀ քաղաքացիները կարող են իրենց կրթությունը շարունակել Գերմանիայի Դաշնային Հանրապետության հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2017 թվականի դեկտեմբերին Երևանում բացվեց Գյոթե ինստիտուտի մասնաճյուղը:
- Հայագիտական համահայկական օլիմպիադային մասնակցել է շուրջ 70 երիտասարդ՝ Հայաստանից, Արցախից և Սփյուռքի 6 երկրներից, իսկ բնագիտականին՝ շուրջ 70 երիտասարդներ՝ Հայաստանից, Արցախից և Սփյուռքի 9 երկրներից:

- Օտարերկրյա պետությունների հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում Հայաստանում վերապատրաստվել է շուրջ 120 ուսուցի՝ 21 երկրից: Վերապատրաստումը կազմակերպվում է Սփյուռքի բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում հայոց լեզու և գրականություն ու հայագիտական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչների, լրացուցիչ կրթության ոլորտում աշխատանք իրականացնող մանկավարժների և սփյուռքում կրթական գործի կազմակերպման պատասխանատուների համար:
- Օտարերկրյա պետությունների հայկական կրթօջախների համար ուսումնական գրականության ստեղծման և տրամադրման ծրագրի շրջանակներում սփյուռքում գործածության են երաշխավորվել 4 ուսումնական ծրագրեր և ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև ստեղծվել են էլեկտրոնային ուսումնական նյութեր:
- 2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով անցկացվել է Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը, որին յուրաքանչյուր տարի մասնակցում են շուրջ 1500 երեխաներ՝ Հայաստանի Արցախի և Սփյուռքի ավելի քան 150 հաստատություններից:
- Նախադպրոցական կրթական ծրագրով լիցենզիա են ստացել 207, տարրական հանրակրթական ծրագրով՝ 11, հիմնական հանրակրթական ծրագրով՝ 10, միջնակարգ հանրակրթական ծրագրով՝ 10, նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 3, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով՝ 3 ուսումնական հաստատություններ: Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով 57, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով’ 25 մասնագիտությունների գործունեության թույլտվություն է տրվել:
- 2017 թվականին բուհերում և գիտական կազմակերպություններում գործող 60 մասնագիտական խորհուրդներից ատենախոսությունների պաշտպանություններից հետո մուտքագրվել է 443 գիտական աստիճանի որակավորման գործ՝ այդ թվում 35

դոկտորական: Հանձնվել է 396 գիտական աստիճանի վկայագիր՝ այդ թվում 41 դոկտորի և 355 թեկնածուի:

- «Թեժ գիծ» հեռախոսակապով ընդունվել է 160 ահազանգ: Պատասխան է տրվել քաղաքացիների կողմից էլեկտրոնային փոստով ստացված ավելի քան 340 նամակի: